Արձանագրություն N 3

Ապարանի համայնքապետարանի կարիքների համար «ԱՄ-ԱՀ-ԳՀԱՇՁԲ-18/04» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի շարունակություն

Ք.Ապարան «20» Ապրիլի 2018թ. Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

Գնահատող Հանձնաժողովի նախագահ՝	Աբրահամյան Գոռ - Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ(ԳԱՊ)
Հանձնաժողովի անդամներ՝	Կարապետյան Արկադի - Համայնքի ղեկավարի խորհրդական (ԳԱ), Մանուկյան Արթուր - Ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ (ԳԱ), Պապիկյան Վահե - Աշխատակազմի առաջատար մասնագետ (ԲԱ) Շահբազյան Հովհաննես - Ավագանու անդամ (ԲԱ)
Գնումները համակարգող	Միեր Ամիրյան - Ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ (ԳՀԱ)

Օրակարգ

1. **ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացության մասին**

(Գ.Աբրահամյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների և «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ: ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է դրական եզրակացություն:

1.2 Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող ճանաչված մասնակիցի կողմից էլեկտրոնային կայքի միջոցով հրավերով սահմանված ժամկետում ներկայացվել են որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև գնման առարկաների իրենց կողմից առաջարկված տեխնիկական բնութագրերը, որոնք գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:

2. **Գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին**

(Գ.Աբրահամյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետը՝ հանձնաժողովը որոշեց հաստատել գնանշման հարցման ընթացակարգի 2 մասնակիցների հայտերի գնահատման արդյունքները.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
«Իրտիգ» ՍՊԸ	Բավարար
«Գործ - 555» ՓԲԸ	Բավարար
«Սեմանգ» ՍՊԸ	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. ԱՄ-ԱՀ-ԳՀԱՇՁԲ-18/04 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակցի և պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Գ.Աբրահամյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին և 2-րդ կետերը՝ «ԱՄ-ԱՀ-ԳՀԱՇՁԲ-18/04» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել «Սեմանգ» ՍՊԸ -ին:

3.2 Համաձայն ՀՀ Գնումների մասին օրենքի 10-րդ հոդվածի՝ հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը. և սահմանել անգործության ժամկետ 5 օրացույցային օր:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

(Գ.Աբրահամյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել անգործության ժամկետը լրանալու հաջորդ օրը ժամը 14:00-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ -5, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Աբրահամյան Գոռ

հանձնաժողովի անդամներ՝ _____ Կարապետյան Արկադի

_____ Մանուկյան Արթուր

_____ Պապիկյան Վահե

_____ Շահբազյան Հովհաննես

Գնումները համակարգող _____ Ամիրյան Միհր